

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՇՆՈՐՀԱՎԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵԱՌՆ ԳԱՐԵԳԻՆ Ա.
ՀԱՐԱՎԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ԵՂԲՕՐ ՄԵՐՈՒՄ
ՍԻՐԵԼԻՈՅ ՈՂՋՈՅՆ ՏԻՐԱՒԱՆԴ

Մենք ճանաչում ենք Ձեզ պատանեկության հասակից, որպես Ս. Էջմիածնի Հոգևոր նեմարանի ընդունակ, ջանասեր և պարկեշտ ուսանող: Շնորհիվ Ձեր ընդունակության և ջանասիրության՝ Ձեր նեմարանական ուսման պաշարը հարստացրիք ու կատարելության հասցրիք բարձրագույն կրթությամբ և ամբողջովին նվիրվեցիք Հայ Եկեղեցուն և Հայ Ժողովրդի հոգևոր առաջնորդության մշակման:

Ձեր գործունեության անդրանիկ ասպարեզը նեմարանը հանդիսացավ, ուր երկար տարիներ գործեցիք, որպես ուսուցիչ և տեսուչ՝ դաստիարակելով հայ մատաղ սերունդը ազգային և քրիստոնեական լայն մարդասիրական ոգով և տվիք Հայ Եկեղեցուն և Հայ կյանքին օգտակար գործիչներ:

Ձեր այդ բազմազբաղ աշխատանքների շրջանում և այնուհետև՝ իբրև նաև գրական ասպարեզ՝ տալով պատմական, մատենագրական, հնագիտական արժեքավոր աշխատանքներ, որոնց գլուխ գործոցը պիտի հանդիսանա Ձեր Հայ Մանրանկարչության պատմությունը:

Գործեցիք նաև Եկեղեցական-Վարչական ասպարեզում՝ վարելով բազմապիսի պաշտոններ և Ձեր վարած բոլոր պաշտոններում էլ առաջնորդվեցիք միա՛յն ու միա՛յն հայ տարագիր ու տառապյալ ժողովրդին օգտակար լինելու գաղափարով, ուստի և սիրվեցաք ժողովրդից:

Ձեր անցյալ արդյունավետ գործունեությունը, Ձեր ժողովրդասեր և մարդասեր ոգին և հանդեպ Ձեր՝ ժողովրդի տածած սերը առաջնորդեցին Ձեզ դեպի Տանն Կիլիկիո կաթողիկոսական գահը, ուր այսօր էլ նույն ոգով գործում եք:

Անհնշմարելի չպիտի անցնի ու ընդգծելի է Ձեր գործունեության և այն գիծը, որ Դուք՝ Ձեր գործունեության բոլոր ասպարեզներում, միշտ հավատարիմ եք մնացել Ձեր վանական ուխտին՝ ամբողջովին նվիրվել Ս. Էջմիածնին, որ մայր է Հայ Եկեղեցիների, որ Հայ ժողովրդի պատմական դաստիարակն է ազգային, կրոնական և մշակութային ասպարեզներում:

Եկեղեցու և Ազգի մշակը չի կարող Հայոց Հայրապետի աչքին անհնշմարելի մնալ: Մենք, որպես Պետ Հայ Եկեղեցու, որպես Ամենայն Հայոց Հայրապետ, Մեր այս Հայրապետական կոնդակով, ի տրիտուր Ձեր անձնական բարձր արժանիքների, տալիս

ենք Շնորհազարդությանդ անձնական իրավունքի՝ կրելու Ձեր վեղարի վերա ադամանդյա խաչ, հավատալով, որ դորանով Մենք Հայ ժողովրդի և Հայ Հոգևորականության ցանկության արտահայտիչն ենք հանդիսանում:

Ձեզ վերա նույն ոգով և եռանդով գործ հոգուտ Հայ Եկեղեցու, Հայ ժողովրդի, Հայրենի երկրի:

Մաղթում ենք նաև արևշատություն, Դուք տեսնեք Հայ ժողովրդի և Հոգևորականության պատմական իղձերի կատարումը մխիթարվեք:

Անտուածային օրհնությունն ենք հայցում

Շնորհք և ողորմություն Տյառն մերո Հիսուսի

Քրիստոսի իջցե և հանգիցե ի վերա Ձեր, ամեն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն դեկտեմբերի
1946 ամի Փրկչական
Ի տոմարիս Հայոց ՌՅՂԵ
Յերկրորդում ամի Հայրապետութեան Մերոյ
Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ